1485. Թվ. ՉԼԴ. Օգոստոսի ամսոյն Շտեֆան վոյվոտան Օլախի (Վլահք) երկրին՝ հոլտովադ (հպատակութիւն) արաւ Քազիմիր թագաւորին Իլախաց երկրին։

1485. Թվ. ՉԼԴ. Երկուսում անգամ Թուրքն զՍեչոմն այրեց։

1494. Թվ. ՉԽԳ. Զճըհուտ ազգն ի այսմ Լիդվայի երկրէն վարեցին և հալածեցին։

1497. Թվ. ՉԽՉ. Հոկտեմբ. 25. ըզՕլպարախդ թագաւորն Իլախաց՝ անհաւատ և խաբերայ ազգն որ կոչի Օլախ, կոտորեցին ի Պուքովինան, Շտեֆան պարոն։

1497. Թվ. ՉԽՉ. Իլախ թագաւորն Օլպարախդ (Ալբերտ) անուն՝ Օլախաց երկրի վերայ գնաց։

1498. Թվ. ՉԽԷ. Եկաւ Մալգոչն? Տահիկք։ Եւ ի նոյն ամին եկաւ Շտեֆան վոյվոտայ Օլախաց՝ ի վերայ Կամենիցոյս. և պատնէշ արաւ ութ չաբաթ։

1502. Թվ. ՉԾԱ. Վաղջանեցաւ Տէր Խաչատուր Եպիսկոպոսն, որ էր աղնիւ և աստուածաբան վարդապետ։

1503. Թվ. ՉԾԲ. Ըստըմպօլն՝ զտէր Յովհաննէսն, զտէր Դաւիթն, զտէր Սարգիսն՝ որք էին յԷջմիածնայ Նվիրակք, նահատակեցան, մատնելով ի ձեռս.. և վասն անմեղութեան նոցա ի յերկնից մեծապանչ լոյսն ճառագայթեց ի վերայ մարմնոյ նոցա. զոր Տէր Աստուած տացէ մեզ ամենեցուն ըզնոյն մասն և բաժին՝ զոր նոքա ընկալան ի Տեառնէ։

1506. Թվ. ՉԾԵ. Օգոստոսի 19. Վաղջանեցաւ թագաւորն Ալէքսանդր (Ա.) Իլախաց աշխարհի։ — Եւ ի նոյն ամին երեւէր ագեւոր աստղն։

1507. Թվ. ՉԾԶ. Նստաւ ի թագաւորութիւն Զիկմոնտ (Ա.) բարեպաշտ թագաւորն մեր, փետրուարի վեց. և վաղջանեցաւ Թվ. ՉՂԷ (1548), ի օրն սրբոյ Զատկին։

1509. Թվ. ՉԾԷ. Փետրուարի 21. Քնազ Կոստանդին կոտորեց զԴաղարն 1200 ի Պիլըյձէոքովէն (Belozerka ի Տաւրիդիան նահանգի), Հորոտիշչան (Horodiszcxe 'ի Զէրքասք գաւառի Ռուսաց), և ազատեց 9000 գերիք ի ձեռաց անօրինաց։

1509. Թվ. ՉԾԸ. Վարդավառի ութ աւուրն եկաւ Պոհտան Օլախի վոյվոտան Իլովի վերայ։

1514. Թվ. ՉԿԴ. Սեպտեմբերի 8, եղաւ կռիւն Օրշային (Orsava Սերպիոյ). զոր Աստուծոյ աջողութեամբ գնաց Կոստանդին 14,000 հոգով կոտորեց զՄոսքովցիքն 80,000։